

**«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ  
Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ**

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ  
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԱՌԱՐԿԱ**

**ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱՍՆԱԿԻՑ**

**Դպրոց՝ Մ. Գալշոյանի անվան համար**

**148 ավագ դպրոց**

**Շուշանիկ Հովհաննիսյան**

**Ղեկավար՝**

**Անուշ Աբեյյան**

**Հետազոտման թեմա՝**

**Շահան Շահնուրի «Նահանջ առանց**

**երգի» վիպակի դասավանդման**

**մեթոդիկական ավագ դպրոցում**

## Բովանդակություն

Ներածություն .....	2
Հետազոտական աշխատանքի նկարագիրը .....	2
Հետազոտական աշխատանքի նպատակը .....	4
Հետազոտական աշխատանքի վերջնարդյունքները ....	5
Հետազոտական աշխատանքի առաջամուղ հարցադրումները .....	6
Օգտագործած գրականության ցանկ .....	6
Միջառարկայական կապեր .....	7

# Ներածություն

Այս հետազոտական աշխատանքը կատարվել է ուսուցիչների 2022թ. հերթական վերապատրաստման դասընթացի շրջանակներում: Որպես թեմա ընտրվել է Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը, որում հեղինակը ցույց է տալիս հայերի ձուլման վտանգը օտար հողում: Հետազոտության նպատակներից մեկն է ցույց տալ թեմայի արդիականությունը և դեռևս չանհետացած վտանգը:

## Հետազոտական աշխատանքի նկարագիրը

Հայր օտարության մեջ, հիրավի ,նման է մի մարտիկի, որը անընդմեջ պայքարի մեջ է ընդդեմ ձուլման, ազգային արժեքների կործանման: Հեռանալով հայրենիքից, նրա մասը կազմող ծնողնորրից և հարազատներից՝ հայ մարդու մոտ սկսվում է «մշակութային ցնցում», և սկսվում է ամենատրոշիչ մարտը հայրենիքից հեռու էակի համար: Կախված նրանից , թե ինչքան ուժեղ և կառչած է իր արմատներից հայը, նա կհաղթի կամ կպարտվի այդ մարտում:

Վեպում բավականին խորը պատկերներով ներկայացված է քաղաքական պայքարում կորսված հայրենիքի և օտար ավերում ապրող անհատի խեղված ճակատագրի կապը, իր ազգային արմատներից կտրված անհատի ողբերգությունը, առանձին անհատների ինքնագոհողության պատրաստականությունը հանուն ազգի և հայրենիքի հարատևման: Օտարության մեջ հայտնված հայ մարդը լուծում է երկու կարևոր խնդիր՝ ողջ մնալու և տեղին ու տեղացիներին հարմարվելու ,շուտափույթ այդ երկրի լեզուն սովորելու, նրա ժողովրդի բարքերը և կենցաղը ընթրօրինակելու, որպեսզի իր ոտքերի տակի հողը ամրապնդելով կառուցի իր եկեղեցին և դպրոցը: Ժողովուրդը վեպի հերոսների ներաշխարհում կարդաց իր խոհերը, ճանաչեց իրեն և հասկացավ, թե նահանջի, ուժացման ճանապարհը որքան ուղիղ է ձգվում և որքան դյուրին է սայթաքելը: նահանջել ազգային կերպարից լեզվով, կենցաղով, հոգով և էությամբ:

Շահնուրի վեպը, ազգային լինելով հանդերձ, համամարդկային է. այն պատկերում է 20-ական թվականների փարիզյան կյանքը՝ իր բարդություններով, անբարոյական, դրամատիքական, մարդկային այլազան հարաբերություններով և

անբնական ընթացքով: Վեպում կողք կողքի հանդես են գալիս հայեր և ֆրանսիացիներ՝ ստեղծելով ֆրանսիական կյանքի համայնապատկերը: Շահնուրը փորձում է ցույց տալ օտար կյանքի ապականիչ ազդեցությունը ոչ միայն հայի, նաև հենց իր՝ ֆրանսիացու նկարագրի վրա: Որպես ֆրանսիացի հերոսներ՝ վեպում հանդես են գալիս Լեսքյուռը, Փթիթ Լիզը և դրվագային ևս մի քանի կերպարներ՝ Գին, Գաբին, Թերեզը, որոնք միայն միտված են օտար միջավայրի ընդհանուր ֆոնը բացահայտելուն: Շահնուրի Լեսքյուռն իր վարքով ու բարքով տարբերվում է ֆրանսիացի մյուս հերոսներից և իր ժամանակի մարդն է: «Իրավ ալ կարծես այդ շրջանեն մնացած տիպար մըն էր, – գրում է Շահնուրը, – միշտ մեծ խնամքով հազված, լամբակին ծաղիկ մը, մազերը ներկած, արծաթե կոթով գավազան, ոտքին «կեթո»եր, մատներուն մատանի, բեղերուն օձանելիք (cosmétique): Խիստ հատկանշական դիմագիծ մը ուներ ան և իրապես տարօրինակ մորթի գույն մը: Վավաշոտ շրթունքներ, կանաչորակ աչքեր, որոնք կարծես կեղծ են ու խարդախ, բայց որոնք գիտեն այնքան լավ ծածկվիլ չափազանցված ծեփծեփումի մը տակ»

Պետրոսը որոշ ժամանակ անց դարձավ Պիեռ, մոռացավ իր ծնողներին, հայրենիքը, մայրենի աղոթքը: Պետրոսը կորցրեց իր ինքնությունը, իր ԵՄ-ը և դարձավ անկառավարելի և տհաճ մի մարդ՝ փորձելով բավարարել ֆրանսիական հանրությանը:

Շահան Շահնուրը նահանջի առաջին ազդակը համարում է սեռը, և նրա վեպը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեռի վերհանում և քննում: Սեռի հարցերը 20-30-ական թվականներին սփյուռքահայ գրողների ստեղծագործություններում դիտվում են որպես ազգային-ավանդականից նահանջի «նախադուր»: Պետրոսն ինչքան էլ անհատականացված լինի, մնում է տիպական կերպար. նա այն հայն է, որ, ընդդիմանալով ուժացման ռեալ վտանգին, չի կարողանում սահմանազատվել նահանջի հետապնդումներից, արարքներն, ավելի է մխրճում իրեն օտարության ճահիճը: Պետրոսի անցած ճանապարհը համընդհանուր է. այդպես շարժվում է մի ամբողջ սերունդ: Ճիշտ է, Պետրոսը կանխատեսող չէ, «շարքային» ֆրանսահայ է, սակայն գրողը վճռում է նրա մեջ օտար կյանքի ոսպնյակով բեկել ազգային տագնապները և նրա միջոցով ցույց տալ հայամնա ու հայակորույս վիճակները: Պետրոսի և Նենեթի սիրո հարաբերություններով, որոնց հիմքում ընկած է երկու ազգերի՝ հայերի և ֆրանսիացիների, Արևելքի և Արևմուտքի սիրո հանդեպ ունեցած գաղափարների բախումը, ըմբռնումների տարբերությունը, Շահնուրը վարպետ գրչով տվել է նահանջի պատկերը: Վեպում հայր՝ արևելցին, ներկայացված է Պետրոսի միջոցով: Նա սիրո մեջ հայ է, անշահախնդիր: Սիրում է անկեղծ, անվերապահ, սրտի ամբողջ քուրայով: Պետրոսն իր ողջ էությանը պատրաստ է անմնացորդ նվիրվել իր սիրած էակին՝ Նենեթին: Հայի համար սերը հոգեկան ապրում է, ներաշխարհի արև: Այդ սերն է, որ վաղ թե ուշ կործանելու է Պետրոսին: «Այդ սերը, – իրավացիորեն գրում է Ա. Եղիազարյանը, – Փարիզի

պայմաններում ծուղակ է Պետրոսի համար, որովհետև դա նրան քաշում է դեպի փարիզյան ճահիճը, սեռի ու վայելքների ազգություն չճանաչող աշխարհը, հենց այն Լեսբյուրի աշխարհը, որ այնքան արգահատելի էր Պետրոսի համար»:

Նույն ընթացքում Ջարեհը՝ Պետրոսի ընկերը, ամեն կերպ փորձում էր պահել իր ավանդությունները, իր ՀԱՅ լինելու կոչումը, նա ընդդիմանում էր իր ընկերներին, որոնք մոռացել էին իրենց ինքնությունը ասելով «Նորեն ֆրանսերեն թերթ, նորեն ֆրանսերեն թատրոն. աստուց հայերենը չկա: Չպիտի ըլլա որ դուք սանկ մեյ մը ցնցվիք, գիտակցիք մեր վիճակին, չպիտի ըլլա, որ կովիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դեմ...»: Ջարեհը և Պետրոսը հայի երկու հակադիր կերպարներ են:

Ամբողջովին կորցրել էր իրեն նաև Հրաչը, որը ամուսնացել էր կանադուհու հետ և նույնիսկ ծնողներին տեղյակ չէր պահել դրա մասին: Նա լիովին մոռացել էր ծնողներին, հայրենիքը, Հրաչը այլևս ավանդապաշտ հայր չէր, որը մերժում էր օտարի հետ ամուսնությունը, նա նույնիսկ իր որդուն անվանեց ֆրանսիական անուն՝ Բրեն:

Վեպի յուրահատուկ կերպով հանդիսացող հայր Սուրենն էր: Նա էր արտահայտում հեղինակի մտքերը՝ լինելով չափազանց ռեալիստ և գնահատելով իրավիճակը այնպես, ինչպես կար: Սուրենը հայի առաջին դժբախտության պատճառներից մեկն էլ տեսնում է կրոնի մեջ և փորձում է դուրս գալ դրա դեմ՝ իր սուրն ուղղելով Նարեկացու «Մատյա-նին»։ «Հայերը գիրք մը ունին: Անոնց ամենագեշ, զգվելի, ամենասխալ, վատառողջ և ամենեն ավելի անբարոյական գիրքն է ան – Նարեկը: ...Ոչ մեկ սերունդ, չխորհեցավ զայն ջնջել, որովհետև անոր լեզվական և բանաստեղծական ինչ ինչ հատկություններն խաբվելով ծածկված թույնը չնշմարեց: Ընդհակառակը փոխանցուցին որդիե որդի, արյունե արյուն, ու ան եկավ մինչև մեզ: Թունավորվեցանք, ազգովին թունավորվեցանք: Ահա թե ինչու պարտված ենք: Պարտվածներ ենք, որովհետև այն վանականին հաշմանդամ հոգիին պես արհամարհեցինք և անգիտացանք գոյությունը մեր եսին, մեր ուժին, կամքին, անհատականության, չկովեցանք, չխածինք, չմաքառեցանք:

Քրիստոնեական վարդապետության անոր սխալ ու թերի մեկնությունը ընդունելով եղանք անմտորեն կրավորական, համակերպվող, աղերսարկու, անգիտակից»: Նա փնտրում էր հայի դժբախտությունների պատճառը և պատասխանը գտավ պատմության խորքերում, հայ երիտասարդության, հայի թուլամորթության, ոչ սառը դատողության և հայ ղեկավարների մեջ: Նա ասում էր. «Դուն, հայ լակոտ, դու ամենեն շուտը կփոխվիս անասունի, եթե օր մը իսկ մնաս առանց վիշտի»:

Նա հասկանում է, որ անկախության հույսն այլևս ի դերն է ելել, և այժմ դամոկլյան սուրը կախված է մեր ժողովրդի հիմնասյան՝ հայ ընտանիքի գլխին, որ հայ աղջիկը մնացել է հեռվում, լքված ու միայնակ, որ հայ «երիտասարդը տեսավ ֆրանսիացի աղջիկը, գերմանացին, իտալացին, հույնը, ռուսը, օր մը անոր բույրը ծծեց, օր մը մյուսը ...., սիրվեցավ քանի մը անգամներ, մինչև որ ինքն ալ սիրեց օր մը, դուռ մը ետևեն գոցելով»:

Սուրենը, ինչպես և մերօրյա գաղթականները, որպես մարդու հայ տեսակի ընդհանրացված կերպար, որքան էլ որ կյանքի թելադրանքով օտարության մեջ հայտնված լինի և օտար բարքերին ենթակա, չի կարող մոռանալ իր հայ լինելու հանգամաքը, որովհետև մենք ծնված օրից, մայրական կաթի հետ երեխային սնուցում ենք «հայ, Հայաստան, հայրենիք, հող հայրենի» հասկացություններով՝ դրանք ներմուծելով նրա գիտակցության ու ենթագիտակցության ոլորտ: Եվ որպես հայ մարդ՝ նա անհանգստացած է սփյուռքահայության վիճակով ու հետագա ճակատագրով: Սուրենը նահանջում է ոչ միայն լեզվով ու խոսքով (գրելով ֆրանսերեն գիրքը), այլև մտքով, գաղափարներով, էությամբ:

Այսօր էլ շատ մտավորականներ՝ գիտնականներ, գրողներ, բժիշկներ լքել են հայրենիքը՝ օտար ավերում բարձր վարձատրվող աշխատանք ու փառք փնտրելու,՝ մեկնաբանելով, որ այստեղ ապագա չկա,՝ մոռանալով, որ իրենք են ապագա կերտողները:

Հասարակ շինականը մեկնում է արտագնա աշխատանքի, տարիներ հետո պարզվում է, որ օտարագրի կին ու ընտանիք ունի, շատերն էլ ընտանիքով որոշում, մեկ օրում վաճառում են հայրական տունը և առանց երկար-բարակ մտածելու, առանց որոշակի ծրագրերի մեկնում օտարություն: Նահանջող է ոչ միայն սփյուռքահայը, այլև հայրենիքում ապրող հայ մարդը:

Արտագաղթի հիմնական պատճառներն են սոցիալական, տնտեսական, բարոյահոգեբանական, քաղաքական, մասնավորապես հուսալքությունը, հավատի կորուստը, երկրի, իշխանության, ապագայի հանդեպ: Առաջին երկու պատճառները հիմնականում բնորոշ են անկախության վաղ շրջանին և ժամանակ առ ժամանակ արտագաղթը նոր թափ է ստանում: Գյուղացին, որ կերակրում է քաղաքը, լքում է գյուղը, հողը, դատարկվում են սահմանամերձ գյուղերը: Տրոհվում է ոչ միայն ազգը, այլև ընտանիքը: Երկրում պակասում է հոգևոր հարստությունը, հեռանում են լավ մասնագետները:

Այսօր էլ նահանջը իրողություն է և պիտի նշենք, որ նահանջողը ոչ միայն սփյուռքահայն է, այլև իր հայրենիքում ապրող հայ մարդը: Ու եթե օտար հողում ապրողի նահանջը կարող ենք արդարացնել նրանով, որ մեր ծիլը նոր հողը չսիրեց, օտար քամիներն էլ շատ ուժգին էին, նոր տերերն էլ ինքնակամ պատվաստ արեցին նրա անպաշտպան ճյուղերին, ապա մայր հողին պահ տված ծիլը իրավունք չունի օտար պտուղներ տալու, բայց տվեց: Շահնուրի ստեղծած կերպարները այսօր էլ մեր կողքին են, մեր մեջ: Անդրադառնանք նրա կերտած նահանջողների կերպարներին և դժվար չի լինի նրանց մեջ գտնել մեր եղբայրներին, հեռավոր զարմիկներին, հարևաններին և, վերջապես, ինքներս մեզ:

Շահնուրը երեսնական թվականներին ակտիվորեն մասնակցում էր փարիզահայության գրական կյանքին, այս ընթացքում իր նման երիտասարդների հետ ստեղծեց «Մենք» գրական խմբակցությունը: Նրանք գրական երկերը գնահատում էին գրական բարձր չափանիշներով, կտրուկ մերժում կուսակցական

մոտեցումները, առհասարակ քննադատում էին ազգային կուսակցությունների գործունեությունը:

Տարագիր այս հայր չտրվեց ձուլման հոսանքին և օտար երկրում, Հայաստանը չտեսնելով, մնաց հայ, ցավով հասկացավ ու ընդվզեց հայկականությունից հեռացող մեր անգիտակից, հաշմանդամ հոգի ունեցող սերունդների դեմ. «Եւ մենք դեռ կը նահանջենք բանի ու գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»:

Ծանր հիվանդության՝ ոսկրախտի պատճառով 1930-ական թթ. վերջերից մինչև կյանքի մայրամուտը անցկացրել է հիվանդանոցում:

Սերո Խանգաղյանը հիշում է՝ ինչպես է մի անգամ Ֆրանսիայում հանդիպել է Շահնուրին, ծերանոցի բակում երկար զրուցել իր սիրելի գրողի հետ. «այս մարդն իր ամբողջ կյանքում կռվել է ինքն իր հետ, աշխարհի հետ, անցյալի հետ, ներկան մերկ նկարագրելով՝ ներկայի հետ»:

## **Հետազոտական աշխատանքի նպատակը**

Բացահայտել պատմական ժամանակաշրջանի, երկրի քաղաքական իրավիճակի և անհատի ճակատագրի կապը: Դիտարկել ուժի (հոգևոր, ֆիզիկական, մտքի, կամքի), իշխանության բազմազան ձևերի ազդեցությունը անհատի կյանքի, հոգեբանության վրա:

Դիտարկել երկրի և ժողովրդի գոյության մարտահրավերները և հանուն արդարության մղվող պայքարը ուժի գերիշխանության պայմաններում:

Քննարկել մարդու, ազգի ապրելու իրավունքների պաշտպանության խնդիրը:

Այս աշխատանքը օգնում է սովորողին ինքնաճանաչման, ինքնաքննադատության, աշխարհի ճանաչման և քաղաքական հայացքների ձևավորման գործում:

Աշակերտը ձեռք է բերում ինքնուրույնություն, ինքնուրույն աշխատանքի կարողունակություն, վերլուծական կարողունակություն, մարդկային արժեհամակարգի գնահատման կարողունակություն:

Աշակերտը սովորում է գնահատել հայրենիքի, հայկական արմատների արժեքը: Կապը ազգային ինքնության և իր անձի միջև, դրա կարևորությունը: Ցույց է տրվում նաև հայրենիքի և ծնողների կապը, քանզի շատ հերոսներ մոռացան միաժամանակ մոռացան և՛ հայրենիքը, և՛ ծնողներին:

Այս գործն այնքան արդիական է, որ կարող էր գրվել նաև այսօր բուն Հայաստանում, բայց գրվեց մի այլ՝ առավել բարդ ժամանակահատվածում, այլ

իրողության և այլ տարածության մեջ: «Շահնուրի հերոսները կային գրութենէն առաջ ու կը շարունակէն ըլլալ անկէ ետք» [4], մեզ ներկայացվածը նրանց կյանքի մի հատվածն է միայն, բայց էականը իրողությունն է, իրողությունը նահանջի, որ սփյուռքահային համակարգում է մի հավաքականության մեջ և գլորում այն միակ ճանապարհով, որը սպասում էր յուրաքանչյուրին: «Սա նահանջը» «կջնջե, կձուլե, կանհետացնե ամեն բան»:

Այսօր էլ նահանջը նահանջը նահանջը իրողություն իրողություն իրողություն է, և, ի ցավ սրտի, պիտի նշենք, որ նահանջող է ոչ միայն սփյուռքահայը, այլև իր հայրենիքում՝ մայր հողի վրա, ապրող հա յմարդը: – Ու եթե օտար հողում ապրողի նահանջը կարող ենք արդարացնել նրանով, որ մեր ծիլը նոր հողը չսիրեց, օտար քամիներն էլ շատ ուժգին էին, նոր տերերն էլ ինքնակամ պատվաստ արեցին նրա անպաշտպան ճյուղերին, ապա մայր հողին պահ տված ծիլը իրավունք չունե՞ր օտար պտուղներ տալու, բայց տվեց: Շահնուրի ստեղծած կերպարները այսօր էլ մեր կողքին են, մեր մեջ:

Օտարության մեջ կյանքն ու ժամանակն իրենցն են անում: Հիշենք, որ Պետրոսը վեպում անհամբեր սպասում էր, որ ընկերը՝ Սուրենը, գիրք պետք է գրեր հայերեն, հայ ընթերցողի համար: Բայց ահա գիրքը լույս է տեսնում ֆրանսերեն: Ազգայինից նահանջող Պետրոսը մեղադրում է նրան, ««Կարոտ» բառին ֆրանսերենը չկա ... «կարոտը» չկա ... թող որ հիշեցնեմ, թե ֆրանսերենը գոյություն չունի նաև «մայր» բառին, «հայ» բառին, «աքսոր» բառին ... ֆրանսերենը չկա մեր «գաղթականին», մեր «որբին»»:

Եվ այսպես շատերի նման կործանվում է նաև Պետրոսը, նա մնում է միայնակ, լքված, դատարկված հոգով: Իսկ նրա կերպարով հայ գրողի հայերեն գիրքն ընթերցող աշակերտությունը լուսաբանում էր Սփյուռքի հայության ճակատագիրը՝ նոր լույսի տակ, նոր հույսով, որ կամովին թե ակամա ուժացողները մի օր կփորձեն արթնացնել իրենց մեջ նիրհող ազգային զգացումները:



## **Հետազոտական աշխատանքի վերջնարդյունքները**

Խորապես ուսումնասիրել հեղինակի խոհերը, հասկանալ և ընդունել նրա նշած արժեքները, կարողանալ նկատել ներկայիս վտանգը և հեռու մնալ ձուլումից, ազգային ինքնության ոչնչացումից:

Գնահատել հայրենիք երևույթը, գիտակցել դրա արժեքը, նպատակել դրա զարգացմանը, լինել իրազեկված:

Գիտակցելով ձուլման վտանգը՝ մնալ հայրենիքում և ծաղկեցնել այն:

## **Հետազոտական աշխատանքի առաջամուղ հարցադրումները**

1. 1922թ. արտագաղթի պատճառները և հետևանքները:
2. Որն էր հեռանալու պատճառը:
3. Պոլսահայերի արտագաթի պատճառները և հետևանքները:
4. Ժամանակակից արտագաղթի պատճառները, նահանջի երևույթը ժամանակակից արտագաղթում

éáíáñáŌÁ á»iù ; Ī³ñáŌ³Ý³

√á³Ñá³Ý»Éáí áóŌŌ³Ēäë³Ī³Ý Ī³ÝáÝÝ»ñÁ` Ī³ñ¹³É ë³ÑáóÝ,  
³éá.³ÝáóãĀŪ³Ūp, ³ñi³Ñ³Ūiçã` ÁÝĪ³É»Éáí Ī³ñ¹³ó³Íç »ÝĀ³i»èiÁ,  
÷áĒ³p»ñ³Ī³Ý, ³ŪÉ³p³Ý³Ī³Ý · ĒáñÑñ¹³Ýß³- Ī³Ý çŪ³èiÁ,  
É»½í³á×³Ī³Ý ³é³ÝÓÝ³Ñ³iĪáóãĀŪáóÝÝ»ñÁ.

√í»ñ³ñi³¹ñ»É ëŪáóĀ»Ý

.√á³iŪ»É ÝŪáóĀĀ Ū³Ýñ³Ū³ëÝáñ»Ý

.√á³iŪ»É ÝŪáóĀĀ Ñ³Ū³éái»Éáí

.√í»ñÉáóÍ»É ëi»ŌÍ³.áñĪáóãĀŪáóÝÁ.

√í»ñÝ³.ñ»É ¹³ëç ³é³ÝÓçÝ Ñ³ii³ÍÝ»ñÁ

.√÷áĒ»É ÝŪáóĀç ³i³ñiÁ.

√p³ó³iñ»É ÝŪáóĀç ³ÝÑ³ëĪ³Ý³Éç p³é»ñÁ.

√á³i³ëĒ³Ý»É Ñ³ñó»ñçÝ.

√İ³½Û»É äÉ³Ý.

√³Ý»É ë»÷³İ³Ý »½ñ³İ³óáóÃÛáóÝ.

√p³ó³Ñ³Ûi»É ¹³ëÇ ¹³ëiÇ³ñ³İ³İ³Ý Ý³³İ³İÁ.

√pË»óÝ»É p³ñáÛ³Ëñ³i³İ³Ý »½ñ³İ³óáóÃÛáóÝ.

√Û»İÝ³p³Ý»É İ³ñ¹³ó³ÍA · í»ñÉáóÍ»É.

√pÝáóÃ³·ñ»É ·ñ³İ³Ý Ñ»ñáëÇÝ, Ýñ³ ³ñ³ñùÝ»ñÁ Û»İÝ³p³Ý»É  
éáóÇ³É-Ñá·»p³Ý³İ³Ý i»ë³ÝİÛáóÝÇó.

√³ñi³Ñ³Ûi»É İ³ñÍÇù İ³ñ¹³ó³ÍÇ · Éë³ÍÇ Û³ëÇÝ` ÑÇÛÝí»Éáí ÷³ëi³óÇ  
³³óáóÛóÝ»ñÇ íñ³.

√³ñ¹Ç³İ³Ý³óÝ»É ÝÛáóÃÁ.

√i³ñp»ñ»É ÑÇÛÝ³İ³Ý ³ë»ÉÇùÁ »ñİñáñ¹³İ³ÝÇó.

√i³ñp»ñ³İ»É ·ñ³İ³Ý Å³Ýñ»ñÁ.

√i³ñp»ñ³İ»É ·ñ³İ³ÝáóÃÛ³Ý ßñç³p³Å³ÝáóÛÝ»ñÁ.

√½³i»É ÛÇÛÛ³ÝóÇó Çñ³İ³Ý, ä³iÛ³İ³Ý · »Õ³ñí»ëi³İ³Ý ÷³ëi»ñÁ.

√i³ñp»ñ³İ»É ·ñ³İ³Ý áóÕÓáóÃÛáóÝÝ»ñÝ áó Ñáë³ÝùÝ»ñÁ.

√»ñİËáéáóÃÛáóÝ, p³Ý³í»× í³ñ»É, iñ³Û³p³Ýí³Í İ³ñÍÇù, i»ë³İ»i,  
Ñ³Ûá½ÛáóÝù Ñ³ÛiÝ»É.

√»Õ³ñí»ëi³İ³Ý ËáëùÇ ÛÇçáóáí ³ñi³Ñ³Ûi»É Çñ ÑáóÛ½»ñÁ,  
³ñáóÛÝ»ñÝ áó ÛiáñáóÛÝ»ñÁ, ³Ý»É ÇÝùÝáóñáóÛÝ  
ëi»ÕÍ³·áñí»Éáó ÷áñÓ»ñ.

√Ñ³Ý¹»ë ·³É ÁÝ¹³ñÓ³İ · Ñ³İÇñ× »ÉáóÛÁÝ»ñái.

√ëi»ÕÍ³·áñí³p³ñ İÇñ³é»É Ó»èù p»ñ³Í ·Çi»ÉÇùÝ»ñÁ

·√»ñ ·³İ³Û»É, ËáñÑ»É · »ÝÃ³¹ñáóÃÛáóÝÝ»ñ ³Ý»É.

-√Éë»É, ÁÝİ³É»É · Ñ³Û³ñÅ»ù í»ñ³p»ñÛáóÝù ¹ñë·áñ»É.

√Áëï Ýß³Ý³İáõÃÛ³Ý · ï»ÕÇÝ û·ï³·áñÍ»É äáíáñ³Í ï»ñÛÇÝÝ»ñÁ  
/»½ñ»ñÁ/, Ñ³ëİ³óáõÃÛáõÝÝ»ñÁ · ³ñİ³Ñ³ÛİáõÃÛáõÝÝ»ñÁ.

√Ñ³ëİ³Ý³É · ×Çßİ û·ï³·áñÍ»É Ñ³Õáñ¹³İóÛ³Ý áã Èáèù³ÛÇÝ  
ÛÇçáóÝ»ñÁ.

√p³Ý³íañ · ·ñ³íañ ïñ³Û³p³Ýí³Í Èáèù İ³éáóó»É

.√ÁÝİ³É»É · ï»èÝ»É ·»Õ³ñí»ëİ³İ³Ý ÈáèùÇ  
Ûáõñ³Ñ³İİáõÃÛáõÝÝ»ñÁ, ³ñÅ · áñ»É · ë»÷³İ³Ý ·Ý³Ñ³İ³İ³ÝÁ İ³É  
»ñİÇÝ.

√ÇÝùÝáõñáõÛÝ Ñ»ï³½áİ³İ³Ý ³ßÈ³İ³Ýúáí p³ó³Ñ³Ûİ»É ·ñ³İ³Ý »ñİÇ  
İ³éáóóí³ÍùÇ, páí³Ý¹³İáõÃÛ³Ý, ·áñÍáÕáõÃÛáõÝÝ»ñÇ ½³ñ·³óÛ³Ý  
Ûáõñ³Ñ³İİáõÃÛáõÝÝ»ñÁ.

√³é³ç³¹ñ»É ·ñ³İ³Ý »ñİáõÛ ¹Çã³ß³ñÇ, ·áñÍáÕáõÃÛáõÝÝ»ñÇ  
½³ñ·³óÛ³Ý ë»÷³İ³Ý í³ñİ³ÍA:

## **Հետազոտական աշխատանքի իրականացման փուլերը և ժամկետները**

Հետազոտական աշխատանքի փուլերը՝

Առաջին փուլ՝ թեմայի ընտրություն, նյութերի հավաքագրում, դասդասում

Երկրորդ փուլ՝ քննարկում, հարցերի կազմում

Երրորդ փուլ՝ աշխատանքի ամբողջացում

## **Միջառարկայական կապեր**

Հայոց լեզու, աշխարհագրություն, օտար լեզուներ, պատմություն, գրականություն, երաժշտություն, կերպարվեստ:

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Նահանջ առանց երգի» Շահան Շահնուր
2. Հայ գրականության դասավանդման մեթոդիկա Գ.Հ. Կիրակոսյան



